

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒԲԵՆ ՄԻՐՁԱԽԱՆՅԱՆ

*Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի ռեկտոր,
սպարմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 1921-1925 ԹԹ.

Խորհրդահայ դպրոցի ձևավորման ճանապարհին առկա խոչընդոտներին, որոնք պայմանավորված էին տնտեսության անմխիթար վիճակով և խորհրդային Հայաստանի տարածքում դպրոցական կյանքի ավանդույթների բացակայությամբ, խորհրդահայ կրթալուսավորական համակարգը վերելք էր ապրում:

Կրթալուսավորական գործն ընդհանում է հետևյալ փուլերով՝ անգրագիտության վերացում, նախադպրոցական կրթության կազմակերպում, խորհրդային դպրոցի հիմնադրում:

Կրթական կյանքի կազմակերպման աշխատանքները տանում են դեպի խորհրդային դպրոցի ձևավորումը, որի ընթացքում փոփոխության են ենթարկվում դպրոցների կազմակերպման ծրագրային դրույթներ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ Կրթական համակարգ, կրթալուսավորական գործ, կրթական կյանքի կազմակերպում, խորհրդային դպրոց:

1921 թ. մայիսի 4-ին Հայաստան է ժամանում Ալեքսանդր Մյասնիկյանը: Հայտնի է, նա Հայաստան է գալիս է Վ. Ի. Լենինի ցուցումով՝ իր հետ բերելով վերջինիս նամակը՝ հասցեագրված «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների հանրապետության կոմունիստ ընկերներին», որի հիմնական հանձնարարությունն էր՝ որ այս հանրապետությունները չպետք է արհեստականորեն ընդօրինա-

կեն այն բոլոր քաղաքական և տնտեսական իրադարձությունները, որոնք տեղի էին ունեցել Ռուսաստանում, այլ՝ անպայմանորեն հաշվի առնեն տեղական առանձնահատկությունները: Բավական է նշել, որ այդ ընդօրինակությունների հետևանքն էր Փետրվարյան 1921թ. իրադարձությունները, որոնց հավանականությունը շատ ավելի նվազ կլիներ, եթե Հայիեդկոմը որդեգրեր հանդուրժողական քաղաքականություն և չխախտեր 1920թ. դեկտեմբերի 2-ի Երևանյան համաձայնագրի պայմանները:

Ալ. Մյասնիկյանի հետ Հայաստան աշխատելու են մեկնում Ս. Սրապիոնյանը (Լուկաշինը), Ս. Համբարձումյանը, Պ. Մակինցյանը, Ա. Երզնկյանը, Ս. Խանոյանը և ուրիշներ: Ալ. Մյասնիկյանը նշանակվում է Հայաստանի Հեղկոմի նախագահ: Մայիսի 21-ին Հայիեդկոմը վերակազմվում է Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի, որի նախագահն է դառնում Մյասնիկյանը:

Ալ. Մյասնիկյանի կառավարման կարճատև շրջանին պետք է վերագրել խորհրդային Հայաստանի ինչպես տնտեսական, այնպես էլ մշակութային հիմքերի ստեղծումը: Կարելի է համաձայնվել Կառլեն Դալլաքյանի այն տեսակետի հետ, որ Ալ. Մյասնիկյանի գործունեության այս շրջանը «ընդգրկում է մեր այն օրերի կյանքի բոլոր կողմերն անխտիր, սկսած տնտեսության կազմակերպումից ու ղեկավարումից» «մինչև կուլտուրական հեղափոխության

քայլ առ քայլ իրականացումը, սկսած դաժան բախտի բերումով աշխարհով մեկ սփռված հայության բեկորների հայրենադարձի գործի կազմակերպումից մինչև մեր մշակույթի ու գիտության լավագույն, ժողովրդանվեր գործիչներին մայր հայրենքիում հավաքելը, Թամանյանի ձեռքով Երևանի գլխավոր հատակագծի ստեղծումից մինչև «Հայաստանի թանգարանի» հիմնումը ...»¹:

Հարկավ, Ալ. Մյասնիկյանն իր գործունեության մեջ չէր կարող շեղվել բոլշևիկյան կուսակցության վերին շրջանների պարտադրած գծից, բայց նրա այդ գործունեության յուրահատկությունը կայանում էր նրանում, որ նա **իսկապես լինելով այդ կուսակցության գաղափարախոսության որդեգիրը, չէր տառապում նախկին Հայհեղկոմի գործիչների կոսմոպոլիտիզմով, որն հասնում էր սեփական ժողովրդի շահերի անտեսման աստիճանի, այլ՝ ներկայացնում էր բոլշևիկների այն տարատեսակը, որը կարելի է անվանել «ազգային-բոլշևիկ»:**

Քանի որ մեր նպատակը Ալ. Մյասնիկյանի գործունեության շրջանում հայոց մշակութային կյանքի ձևավորման գործընթացների վերահանումն է, ուստի նպատակահարմար ենք գտնում այդ խնդիրը լուծել մշակութային կյանքի ոլորտների ձևավորման ու զարգացման պատմությանը առանձին ասպարեզներով ներկայացնելով իրենց բունն և հակասական ընթացքի մեջ:

Ալ. Մյասնիկյանը հենց իր գործունեության սկզբից տնտեսական խնդիրները չի տարանջատում կրթական կամ որ նույնն է՝ լուսավորության խնդիրներից, ինչը երևում է նրա մի առիթով արտահայտած հետևյալ տեսակետից. «Լուսավորության գործը թողած՝ միմիայն տնտեսական և այլ խնդիրներով զբաղվել չենք կարող: Մեր հաղթությունը կրթությունից, գիտակցությունից և

դաստիարակությունից է կախված»²:

Ալ. Մյասնիկյանի համար պարզ էր, որ լուսավորությունը պետք էր սկսել անգրագիտության վերացումից: Գյուղատնտեսական երկիր հանդիսացող Հայաստանում անգրագիտությունը մեծ չափերի էր հասնում: Չքավորության մեջ գտնվող երկրում կրթությունը՝ ոչ բոլոր սոցիալական շերտերի համար էր: 1921թ. սեպտեմբերի 21-ին Ալ. Մյասնիկյանի և լուսժողկոմ Ալ. Հովհաննիսյանի ստորագրությամբ հրապարակվում է «Հ.Խ.Ս.Հ. մեջ անգրագիտության վերացման մասին» դեկրետը: Այն հրապարակվում է երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և արաբատառ թուրքերեն ³:

Ալ. Մյասնիկյանին նվիրված մենագրության հեղինակ Ս. Ամիրջանը այս դեկրետի հրապարակման օրը սխալմամբ համարում է սեպտեմբեր 28-ը⁴:

Թյուրիմացության պատճառն այն է, որ դեկրետը «Խորհրդային Հայաստան» թերթում լույս է տեսել այդ օրը⁵ և նա այդ թերթի հրակարակումն է հիմք ընդունել՝ առանց խորանալու այն հարցում, թե ինչպես էր հնարավոր դեկրետը տպել հենց հրապարակման օրը:

Դեկրետն հրապարակվում է՝ «նպատակ ունենալով Հ.Խ.Ս.Հ. աշխատաւոր դասի լայն խաւերին հնարաւորութիւն տալ գիտակցօրեն ու ակտիւ կերպով մասնակցելու երկրի քաղաքական ու կուլտուրական կյանքին»⁶:

Դեկրետը բխում էր խորհրդային բոլշևիկյան այն գաղափարական կարգախոսներից, որ աշխատավոր խավը պետք է իրագեկվի պետության քաղաքական և մշակութային կյանքից, ավելին՝ դրա մասնակիցը դառնա, որն անհնար էր առանց գրագիտության: Շեշտենք, որ նման որոշումները միշտ էլ ողջունելի են, սակայն

1 Կառլեն Դալլաքյան, Ալեքսանդր Մյասնիկյան, Հայկական ՍՍՀ «Գիտելիք» ընկերություն, Երևան, 1976, էջ 34:

2 Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 399:

3 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 716, թ. 43:

4 Տե՛ս Ս. Ս. Ամիրջան, Ալեքսանդր Մյասնիկյան, Երևան, «Հայաստան», 1988, էջ 514:

5 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 27 սեպտեմբերի, 1921:

6 ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 716, թ. 43:

անգրագիտության վերացման քաղաքականության մեջ ավելի ուշ դրսևորվեցին որոշ ծիսական և ձևական կողմեր: Շատերը հաճախելով անգրագիտության վերացման հաստատությունները (լիկկայաններ), ի վերջո մնացին անգրագետ կամ ոչ տառաձանաչ:

«1. 16-50 տարեկան հասակ ունեցող բոլոր անգրագետներ ու կիսագրագետները – դրանց թվում և Կարմիր բանակայինները – պարտադր են գրագիտություն սովորել մայրենի լեզուով յատուկ դպրոցներում, որ կազմակերպում են Քաղլուսվարն ու նրա տեղական մարմինները»¹ սաված էր դեկրետի առաջին կետում:

Դժվար է պատկերացնել, որ Հայաստանի բնակչությունը, որի 90% – ը կազմում էր գյուղացիությունը, որն ապրելու նվազագույն միջոցներից գրեթե զուրկ էր, կողջուներ այս հրամանը, մանավանդ, որ նրանով նախատեսվում էր գրագետ դարձնել 16-ից 50 տարեկան անձանց: Չվիճարկելով այն ճշմարտությանը, որ գրագետ հասարակության ձևավորվելը ցանկացած ժողովրդավարական պետության կայացման համար պարտադիր պայման է, ցանկանում ենք այն վերապահությունն կատարել, որ **անհնար էր դեպի դպրոցը կամ լուսավորությունը հեշտորեն գրավել մի ազգաբնակչության, որը սովի ձիրաններում էր:** Դեկրետն ինքնին ողջունելի էր և բխում էր ոչ միայն գրագետ հասարակության ձևավորելու կոմունիստական գաղափարախոսական դրույթներից, այլև ազգային կարևորագույն հիմնախնդիրներից, ապրել ու աշխատել կրթված հասարակության մեջ:

Դրական էր դրույթը՝ «Վարձով աշխատող գրագիտություն սովորողների աշխատանքի օրը կրճատում է ուսուցման ընթացքում երկու ժամով, բայց նրանց աշ-

խատավարձը պահպանվում է»²:

Խիստ էր հնչում դեկրետի 7-րդ կետը, որում ասված էր. «Այն անձինք, որ այս կամ այն կերպ կկասեցնեն անգրագիտութան վերացման գործի յաջող ընթացքը կամ կթերանան թէ իրենց պաշտօնական և թէ սույն դեկրետով սահմանված պարտականությունների մէջ, կենթարկւեն քրէական պատասխանատութան»³:

Այլ Մյասնիկյանն անկեղծորեն ցանկացել է գյուղացուն գրագետ դարձնել հրնթացս նրա նյութական դրության բարելավման: Նրա հայրենասիրությունը վիճարկելու ենթակա չէր, բայց շատ խնդիրներ սուկ իր ցանկությամբ չէ, որ պայմանավորված էին:

Չի կարելի առանց դրվատանքի կարդալ նրա հետևյալ մտքերը. «Մեծ ցաւը նրանում է, որ հայ գիւղացին տգէտ է, մտաւորապէս խավար: Հողը լաւ մշակել, պատշաճ հագուստով ման գալ եւ կուշտ ապրել կարող է նա՝ ով ունի գիր, ունի վարժ ու թափանցող միտք, ով իր նիստ ու կացի մէջ գիտէ կիրառել կեանքի ու զարգացման գոնէ ամենակարեւոր եւ շատ ընդհանուր է օրենքները կամ կանոնները: Մեր գիւղացին չի ընտելացած դրան, այդ պատճառով էլ նա խեղճ է, հետամնաց ու աղքատ»⁴:

Դրվատանքի է արժանի նրա խորը ցավը հայ թշվառ գյուղացու նկատմամբ: Բայց նրա այս դատողություններն էլ անհնար է ընդունել առանց որոշ վերապահության: Թերևս այդ դատողությունների խոցելիությունը պետք է պայմանավորել այն անսահման հավատով, որոնք նա տածում էր դեպի բոլշևիկյան կարգախոսները և որոնք այն համոզմունքն էին ներշնչում, որ լիարժեքորեն հնարավոր է կյանքի կոչել սեփական ժողովրդի հանդեպ տածած ազգային բաղձանքները: Բայց այս առումով միգուցե նա սխալվում էր, որի համար կյանքով հատուցեց:

1 Նույն տեղում, դեկրետն ամբողջությամբ տես նաև՝ Հայկական ՍՍԻ օրենքների, գերագույն սովետի նախագահության հրամանագրերի և Հայկական ՍՍԻ կառավարության որոշումների ժամանակագրության ժողովածու, 1920թ. նոյեմբերի 29-1938թ. դեկտեմբերի 31, էջ 68-71:

2 ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 716, թ. 43:

3 Նույն տեղում:

4 Այլ Մյասնիկյան, Սոցիալիստական Հայաստանի առօրեա խնդիրները, Երևան, 1924, էջ 13:

Իսկ վերոհիշյալ դատողությունների խոցելիությունը, մեր կարծիքով, կայանում է նրանում, որ Ալ. Մյասնիկյանը այնքան էլ չի խորացել հայ գյուղացու «խեղձ, հետամնաց և աղքատ» լինելու պատճառների մեջ: Այդ պատճառը համայն ժողովրդի դարեր շարունակ ապրած կախյալ վիճակն էր, որը նրա համոզմամբ արդեն իր ավարտն էր գտնում: Նա հավատացել է դրան, բայց սխալվել է, քանի որ այս դեպքում էլ (այսինքն՝ խորհրդային կարգերի ամկայության) գյուղացին ձերբազատված չէր կախյալությունից և եթե ՆԷՊ-ի շրջանում Լենինը հնարավորություն էր ընձեռում գյուղի և գյուղացու հարստացման համար, քանի որ խրախուսում էր մասնավոր տնտեսությունների ձևավորումը և ազատ շուկայական հարաբերությունները, ապա 1927թ.-ից հետո սկսված բռնի կոլեկտիվացումը վնաս հասցրեց գյուղին:

Ալ. Մյասնիկյանը չտեսավ այդ, բայց իր կարճատև կառավարման շրջանում ցանկացավ գյուղացուն տեսնել գիտուն և հայ գյուղը շեն՝ դրա հնարավորությունը կապելով լուսավորյալ գյուղի և գյուղացու հետ, բայց դա նրան հաջողվեց մասամբ:

Բավական հետաքրքիր է այն հանգամանքը, որ Ալ. Մյասնիկյանը կրթական կամ լուսավորության գործում առաջնահերթությունը տվել է գյուղին: Այսպես, նա մի ամիթով հետևյալն է գրել. «Բաղաքային լուսատրությունը պետք է, պետք են նրա թանգարանները, թատրոններն ու համալսարանները, բայց ավելի մեծ անհրաժեշտություններ են թանգարանը, թատրոնը ու համալսարանը գիղում, որ գրագիտություն բառով է բնորոշում, առանց որի չկա նոր գիղ, չկա գիղացու բարեկեցություն...»¹:

Նույն տեղում նա շեշտում է, որ միայն գրագիտությունը հայ գյուղը դուրս կհանի «քսենտֆոնյան դարաշրջանից»:

Տեսականորեն կարելի է համաձայնվել Ալ. Մյասնիկյանի հետ, բայց գործնականում նրա առաջադրած խնդրի իրականացումը դյուրին չէր, որովհետև քանի դեռ գյուղա-

ցու տնտեսական դրությունը բարելավված չէր, նրա համար լուսավորության խնդիրը առաջնակարգ չէր լինելու: Այդ իսկ պատճառով մենք ականատես ենք գյուղում (և ոչ միայն գյուղում) կրթա-լուսավորական կյանքի կազմակերպման հակասական մի ընթացքի: Լուսավորության գործի կազմակերպումը, բնականաբար, սկսվում է անգրագիտության վերացումից, որի մասին դեկրետին անդրադարձանք: Իսկ անգրագիտության վերացման հիմնարկները լիկկայաններն էին, որոնց էության մասին օգնում է պատկերացում կազմել հետևյալ փաստաթուղթը, որից տեղեկանում ենք, թե ինչպես են կազմակերպվել լիկկայանները և կիսագրագետների խմբակները գավառներում: Փաստաթուղթն առնչվում է 1923-24 թթ. Լուսժողկոմատի գործունեությանը, ուր առանձին բաժնով ներկայացվում է տեղեկություն այդ կրթական սկզբնական օղակների մասին:

Տեղեկանում ենք, որ անգրագետների և կիսագրագետների խմբակների թիվը եղել է 375, իսկ սովորողներինը՝ 7569 (պետք է ենթադրել, որ այս տվյալները վերաբերվում են 1924թ.-ին): Ուսուցիչների թիվը կազմել է 627²:

Նույն փաստաթղթից տեղեկանում ենք, որ Լուսաշխում կազմակերպվել են փորձնական դասեր, «տպագրվել է «մեթոդական ժողովածու» գիրքը, մշակվել է «անգրագիտության վերացման տախտակը», ինչպես նաև՝ «գավառներն են ուղարկվել 219 օրինակ «Մեթոդական ժողովածու», հրատարակվել են «Գրագետ» այբենարանը յեվ «Աշխատանք» դասագիրքը, կազմակերպվել են նայել մի շարք սիստեմատիկ դասախոսություններ»³:

Լիկայաններն որոշ դեպքերում արդյունավետ չէին գործում: Այս մասին է վկայում այն հանգամանքը, որ լուսժողկոմատը անընդհատ փորձել է փոխել դրանց կառուցվածքը, ինչպես նաև անգրագիտության վերացման մեթոդաբանությունը: Մեկ

1 «Մարտակոչ», թիվ 231, Թիֆլիս, 1923:

2 ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 130, թ. 11:

3 Նույն տեղում:

այլ փաստաթղթում նշվում է, որ ստեղծվել է անգրագիտության վերացման նոր սիստեմ (փաստաթուղթը հենց այդպես էլ վերնագրված է՝ «Անգրագիտության վերացման նոր սիստեմը»), որը «կոչվում է անհատական կամ խմբական սիստեմ յեվ կայանում է նրանում, որ մի կենտրոնական լիկ. կայանը (անգրագիտության լիկվիդացման կայան – կրճատ՝ լիկկայան – Ռ. Մ.) դեկավարում է 2-3, կամ նույնիսկ 5-ից ավելի վերստ հեռավորության վրա գտնված գյուղական անգրագետ խմբակները, վորոնք կարծես մի շրջագծի շառավիղներով միանում են այդ կենտրոնական Լիկկայանի հետ: Այս խմբակները կարող են կազմված լինել ոչ մեծաքանակ սովորողներից, այլ ընդհակառակը, ըստ տեղական հարմարության շատ սահմանափակ թվով, նույնիսկ միայնակ անհատներից»¹:

Անգրագիտության վերացման նոր համակարգով յուրաքանչյուր գյուղում, որն հեռու է բնակած կենտրոնական լիկկայանից և «վորտեղից ամեն որ գնալ, գլար շատ դժվար է յեվ ձանձրացուցիչ», կազմակերպվում են ոչ մեծաքանակ խմբակներ, որոնց գրագիտություն են սովորեցնում նույն գյուղի գրագետ ընկերները, իսկ եթե դրանք չկան գրագետ դարձած համագյուղացիները²:

Փաստորեն իրականացվում էր հետևյալ կարգախոսը՝ «դպրոցը մոտեցնենք անգրագետին, յեթե նա չի կարողանում կամ չի ուզում մոտենալ դպրոցին»³:

Ակնհայտ է, որ խորհրդահայ մտավորականությունը ձևավորվեց խորհրդահայ դպրոցում և ոչ թե լիկկայաններում: Անդրադառնանք դպրոցական գործի կազմակերպմանը:

Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի նիստի առ 1-ը հունվարի 1926թ. ընդգրկող գործունեության մասին մի ծավալուն փաստաթղթից մենք պատկերացում ենք կազմում, թե կրթա-լուսա-

վորական ինչպիսի ռազմավարությամբ և մարտավարությամբ է առաջնորդվել այս կառույցը հիշյալ ժամանակահատվածում: Լուսժողկոմատն իր առջև դրել է հետևյալ մեխանիզմով առաջնորդելու խնդիրը:

Առաջին. Նախադպրոցական դաստիարակություն: Կարելի է համաձայվել, որ, ինչպես նշվում է այս ուղղությամբ իրականացված աշխատանքների հետ կապված՝ «Հայաստանի խորհրդայնացումից հետո նախադպրոցական դաստիարակությունը ժողովրդական կրթության սիստեմում տեղ չի բռնել: Նա կրել է պատահական բնույթ և վերապահված է յեղել մասնավոր անձանց նախաձեռնության»⁴:

Իսկապես նախախորհրդային շրջանում նախադպրոցական դաստիարակությունն իրականացրել են մասնավոր անձինք, որոնք վարձվել են և աշխատանքն իրականացրել են տանը:

Հայաստանի I Հանրապետության տարիներին գոյություն է ունեցել ընդամենը երկու մանկապարտեզ և մեկ մանկական հրապարակ:

Խորհրդային Հայաստանում, դեռևս 1920 թթ. դեկտեմբերին Լուսժողկոմատի կազմում հիմնվում է նախադպրոցական դաստիարակության հատուկ բաժին:

Հիշյալ փաստաթղթում կարդում ենք, որ «Նախադպրոցական ցանցի զարգացումը» Հայաստանի խորհրդայնացումից հետո ունեցել է երկու շրջան. «ա) 1920 – 22թթ., յերբ տարեցտարի թափով զարգանում էին մանկապարտեզներն ու հրապարակները, թեպետ նրանք վերածված էին սնդակայանների և շատ թույլ էին մանկավ.–մեթոդական աշխատանքի տեսակետից, բ) 1923 թվից, երբ հաստատուն բյուջեի անցնելուց հետո փակվում է հիմնարկների մեծ մասը, և այնուհետև սկսվում է այդ ցանցի դանդաղ, բայց կանոնավոր զարգացումը»⁵:

Զարգացման ընթացքը ներկայացնենք աղյուսակով⁶:

1 ՀԱԱ., 122, ց. 1, գ. 744, թ. 70:
2 Նույն տեղում:
3 Նույն տեղում, թ. 71:

4 ՀԱԱ., ֆ. Խորհրդային Հայաստան, ց. Հայաստան, գ. 1920 – 1925 թթ., էջ 290:
5 Նույն տեղում, էջ. 291:
6 Նույն տեղում:

1921-22թթ. ուս. տարի			1922-23թթ. ուս. տարի			1923-24թթ. ուս. տարի			1924-25թթ. ուս. տարի			1925-26թթ. ուս. տարի		
հիմնարկներ	երեխաներ	ղեկավարներ	հիմնարկներ	երեխաներ	ղեկավարներ	հիմնարկներ	երեխաներ	ղեկավարներ	հիմնարկներ	երեխաներ	ղեկավարներ	հիմնարկներ	երեխաներ	ղեկավարներ
9	967	32	9	964	32	11	1120	39	11	962	39	14	1000	56

Ինչպես համոզվում ենք, զարգացման դինամիկան առկա է, թեև 1924-25 ուս. տարում նկատվում է երեխաների պակաս, որը պայմանավորվում է խմբերի կրճատումով¹:

Տեսեկագրից ինմանում ենք, որ նախադպրոցական հիմնարկների գլխավոր օղակը կենտրոնական մանկապարտեզն էր, որը «իբրև բազա յե ծառայել ծրագրային աշխատանքների համար» և «գործող մանկապարտեզների մանկավարժական-մեթոդական աշխատանքների կենտրոնն ե յեղել»²:

Այն հիմնվել է 1921թ-ին՝ 29 երեխաներով և 1926թ.-ին՝ 29 երեխաներով և 1926թ. հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 68 երեխա և 8 աշխատող³:

Երկրորդ. Դպրոցական գործ: Հայաստանի խորհրդայնացումից հետո Լուսժողկոմատի առաջին գործերից մեկը լինում է հանրակրթական դպրոցի վերակազմումը իբրև «միասնական աշխատանքային դպրոցի»:

«Միասնական աշխատանքային դպրոցը» հիմնված էր կրթության միասնականության սկզբունքի վրա: Խորհրդային իշխանությունը, վերացնելով «տարրական» և «միջնակարգ» դպրոցական բաժանումները, ստեղծում է «Ա» և «Բ» աստիճանների դպրոցական համակարգերը:

«Ա» աստիճանի դպրոցը աշակերտներին նախապատրաստում էր արտադրա-

կան աշխատանքի համար և պատահական չէ, որ Լուսժողկոմատն այն կոչել է «պոլիտեխնիկ աշխատանքի դպրոց»⁴:

Այս դպրոցի ստեղծման նպատակները աստիճանաբար հղկվելով 1925թ. իրատարակված դպրոցական կանոնադրության մեջ հետևյալ կերպ հիմնավորվեցին. «**Ռուրժուական հասարակության մեջ դպրոցը օգտագործվում է իբրև աշխատավոր դասակարգերի շահագործման հոգևոր գործիք:** Պրոլետարիատի դիկտատուրայի վրա կառուցված Խորհրդային Հանրապետության մեջ՝ աշխատանքի միասնական դպրոցի նպատակն ե՝ ստեղծել կոմունիստական հասարակության կառուցման համար մարտիկների մի սերունդ, որը պիտի օժտված լինի կոլեկտիվիզմի հոգեբանությամբ, ամուր կամքով, անհրաժեշտ հասարակական վորակավորմամբ և մատերիալիստական աշխարհայացքով, հիմնված բնության և հասարակության զարգացման օրենքների իմաստության վրա»⁵: (Ընդգծումները մերն են - Ռ. Մ.)

Հատկապես մեր ընդգծած պարբերություններից եզրակացություններն հետևյալներն են. ա) ամենևին էլ համոզից չէ այն հիմնավորումը և ավելի շատ կրում է քաարոզչական բնույթ, թե այսպես կոչված «բուրժուական հասարակության» մեջ դպրոցը հոգևոր գործիք է ծառայել աշխատավորության շահագործման համար: Եվ առհասարակ միշտ էլ արհես-

1 Նույն տեղում:
2 Նույն տեղում:
3 Նույն տեղում:

4 Նույն տեղում:
5 Նույն տեղում:

տական հնչողություն ունի «աշխատավորության շահագործում» եզրույթը, ք) կասկածելի է նաև հիշատակված սերնդի ստեղծումը, քանզի բնության և հասարակության զարգացման օրենքների խորհրդային մեկնաբանությունները միշտ էլ ունեցել են իրենց գաղափարական այլընտրանքը և որը եթե վախճված պայմանավորված չի դրսևորվել միտում, ապա՝ դրանից չպետք է այն հետևությանը հանգել, որ դրանք բոլորի կողմից ընդունելի էին: Այնուամենայնիվ, որ կրթությունը, թեկուզ և վիճելի գաղափարական հիմնավորումներով առաջնակարգ պլան էր

մղվում, ինքնին և գնահատելի էր: Դրվատելի էր և այն, որ սոցիալական դաստիարակության հիմնական միջոցներից էր հանդիսանում դպրոցը, որն այս շրջանում կոչվում էր «սոցիալական դաստիարակության դպրոց»: 1925-26 ուս. տարում արդեն բացվում են «գյուղական երիտասարդության դպրոցներ» (գյուղերի դպրոցներ): «Սոցիալական դաստիարակության դպրոցների» զարգացման դինամիկան 1921-26 թթ. -ին փորձենք դարձյալ ցույց տալ աղյուսակներով, որը կազմել ենք հիշյալ տեղեկագրի տվյալների հիման վրա³:

դպրոցների տեսակներ	1921-22 ուս. տարի	1922-23 ուս. տարի	1923-24 ուս. տարի	1924-25 ուս. տարի	1925-26 ուս. տարի
	բացարձակ թվերով	բացարձակ թվերով	բացարձակ թվերով	բացարձակ թվերով	բացարձակ թվերով
1. Ա ստ. դպր.	493	547	614	688	704
2. 7-ամյա դպր.	-	-	16	36	40
3. Բ ստ. դպր.	13	10	10	9	8
4. Գյուղերի դպր.	-	-	-	-	6
Ընդամենը	506	557	640	733	758

Այսպիսով, անկախ այն հանգամանքից, որ դպրոցների տարբեր տեսակների տարբեր ուսումնական տարիներում նվազում կամ աճում են, բայց դրանք իրենց ամբողջության մեջ վերելք են ապրում 506-ից հասնելով մինչև 758-ի: Նույնը պետք է պնդել նաև աշակերտության համար, որոնց թիվը 1921-22 ուս. տարվա համեմատությամբ 1925-26 ուս. տարում 47.462-ից հասնում է 76. 989-ի¹:

Մենք ցանկանում ենք ուշադրություն սևեռել երկու կարևոր հանգամանքի վրա: Առաջին, որ դպրոցական տարիքը թեև սկսվում է 8-ից, բայց թե՛ քաղաքներում և թե՛ մանավանդ գյուղերում շեղումները մեծ էին: 8 տարեկան աշակերտի կողքին 12 - 13 տարեկանին, իսկ 10 տարեկանի կողքին՝ 14 -15 տարեկանին տեսնելը սովորական երևույթ էր²:

Այդ երևույթը պետք է պայմանավորել

8 տարեկան երեխաների քանակի սահմանափակ լինելով:

Պետք է նշել նաև, որ դպրոցական ցանցը թեև արագորեն ընդլայնվում էր, բայց առկա էր մանկավարժական կադրերի պակաս, բացի այդ՝ ընդհանուր առմամբ ցածր էր մանկավարժների կրթական մակարդակը: Նրանց մեծամասնությունը չունեի բարձրագույն կրթություն և մանկավարժական աշխատանքի փորձ: Ուսուցիչների մեծ մասն ուներ միջնակարգ կրթություն⁴: Այդ պատճառով 1921 - 25 թթ. ընթացքում կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ, որոնց 1921 թ. մասնակցում են 130, 1922-ին՝ 400, 1923-ին՝ 474, 1924-ին՝ 550 և 1925-ին՝ 450 ուսուցիչներ⁵:

Դժվար է բացատրել, թե ինչու 1923 և 1925-ին թվականներին ավելի շատ

1 Նույն տեղում:
2 Նույն տեղում:

3 Տե՛ս նույն տեղում, էջ. 292:
4 Նույն տեղում, էջ 293:
5 Նույն տեղում, էջ 294:

ուսուցիչներ են վերապատրաստվել, քան 1925-ին: Կարելի է սուսկ ենթադրություններ անել, որոնց համաձայն 1925-ին որակյալ ուսուցիչների թիվն ավելի շատ է եղել, որի հետևանքով քչերին են կանչել դասընթացների: 20-ական թվականների առաջին կեսում դեռևս բացակայում էին ուսումնական հստակ ծրագրերը, իսկ կրթական համակարգը գտնվում էր ձևավորման փուլում: Այնուամենայնիվ՝ դպրոցական գործի կազմակերպումն ընթանում էր մեծ ուժգնությամբ և վերելք էր ապրում:

Վերը շարադրվածից եզրակացնում ենք.

–Այ. Մյասնիկյանի ղեկավար աշխատանքի նշանակվելուց հետո աստիճանաբար կյանքի են կոչվում մինչև այդ հրապարակված կրթական կյանքի կազմակերպմանը առնչվող դեկրետները:

–Կրթական կյանքի կազմակերպման աշխատանքները տանում են դեպի խորհրդային դպրոցի ձևավորումը, որի ընթացքում, փոփոխության են ենթարկվում դպրոցների կազմակերպման ծրագրային դրույթները:

–Կրթա – լուսավորական գործն ընթանում է հետևյալ փուլերով՝ անգրագիտության վերացում, նախադպրոցական կրթության կազմակերպում, խորհրդային դպրոցի հիմնադրում:

– Չնայած խորհրդահայ դպրոցի ձևավորման ճանապարհին առկա խոչընդոտներին, որոնք պայմանավորված էին տնտեսության անմխիթար վիճակով և խորհրդային հայաստանի տարածքում դպրոցական կյանքի ավանդույթների բացակայությամբ 1921 – 25 թթ. –ին խորհրդահայ կրթա–լուսավորական համակարգը վերելք էր ապրում:

Արհեստագործական կրթության կամ լուսավորություն: Հետագայում այն կոչվեց պրոֆտեխկրթություն, իսկ նախկինում այն գոյություն իսկ չունեի: Նմանատիպ կրթության նպատակն էր՝ «պատրաստել «վորակյալ աշխատա-

վորներ գյուղի և քաղաքի համար»¹:

1921–25թթ. Հայաստանն գյուղատնտեսական երկիր էր, ուստի նախ և առաջ զարկ է տրվում գյուղատնտեսական կրթությանը, որը իրականացում են այսպես կոչված գյուղատնտեսական դպրոցներում: Վերջիններիս նպատակն ձևակերպվում էր 1) նոր սերնդին հաղորդակից դարձնել գյուղատնտեսության ոլորտում գիտության և տեխնիկայի նվաճումներին՝ գյուղում որակյալ աշխատողներ պարաստելու համար, 2) ռացիոնալ տնտեսության գաղափարները տարածել հասակավոր գյուղացիության մեջ²:

Սակայն, նպատակի իրականացումը դյուրին չէր, քանզի դեռևս հստակ չէր, թե ինչպիսի տնտեսաձև պետք է ունենար հայ գյուղը, իսկ արդյունաբերության կառուցվածքը դեռևս ձևավորված չէր, որպեսզի գյուղացիությանը մատակարարեր անհրաժեշտ տեխնիկա, անգամ արդյունաբերության զարգացման ուղին լիարժեքորեն ճշտված չէր:

Այս ամենով հանդերձ, իսկ այդ մասին վկայում են փաստերը, հնարավորն արվում էր գյուղը տեխնիկապես հագեցնելու և այդ տեխնիկան տիրապետելու ընդունակ կադրեր պատրաստելու ուղղությամբ:

Լուսժողկոմատի 1922 թվականին բացվում է գյուղատնտեսական տեխնիկում Օշականում և գյուղատնտեսական բաժանմունք՝ Լենինականի ինդուստրիալ տեխնիկումին կից: Օշականի տեխնիկումը 1923–24թթ.ու. տարվա սկզբում, մանկավարժական և աշակերտական կազմի անբավարարության պատճառով վերածվում է գյուղատնտեսական տարրական դպրոցի:

1924–25թթ. հաջողվում է գյուղատնտեսական դպրոցների թիվը հասցնել 10-ի: Դրանք բացվում են Գորիսում, Դի-

1 ՀԱԱ, խորհրդային Հայաստան, ց. Հայաստան, գ. 1920 - 1925թթ., էջ 300:

2 Նույն տեղում:

լիջանում, Ստեփանավանում, Ղարաքիլիսայում, Դվինում, Քեշիշքքենդում և այլուր:

Սակայն դարձյալ գույքի, կադրերի և այլ միջոցների պակասի պատճառով այս կրթական համակարգն այնքան էլ արդյունավետ չեն գործում:

Մանկավարժական կադրերի անհրաժեշտությունից ելնելով, 1922թ. նոյեմբերին բացվում է մանկավարժական ինստիտուտ, որն ուներ եռամյա դասընթաց, բայց այն իր գործունեության երրորդ տարում միանում է պետական համալսարանին: Բավական է նշել, որ 1924-25 ուս. տարում այն ունենում է 17 ուսուցիչ շրջանավարտ¹:

1924 թ. աշնանը մանկավարժական երկու տեխնիկումներ են բացվում՝ մեկը Երևանում, մյուսը՝ Լենինականում, որոնք ունեին 4 - ամյա դասընթացներ: Դրանք ընդունում են 7 - ամյա դպրոցների շրջանավարտներին: Երևանի տեխնիկում ընդունված 50 աշակերտներից 25 որբեր էին, իսկ Լենինականինը՝ բոլորը, որոնք ամերիկյան որբանոցներից էին:

1925թ. Վաղարշապատում և Ստեփանավանում բացված մանկավարժական տեխնիկումների սաները բացառապես ամերիկյան դպրոցներից էին:

Հարկ է նշել, որ 1925թ. հոկտեմբերին Երևանում բացվում է նաև թուրքական մանկավարժական տեխնիկում՝ 49 աշակերտներով, որոնց հավաքել էին տարբեր գավառներից: Ուսուցչական կազմը բաղկացած էր 9-ը հոգուց՝ որոնք ներկայացնում էին թուրքեր և հայեր²:

Մանկավարժական կադրեր նախապատրաստող միակ բարձրագույն հաստատությունը որոշ ժամանակ շարունակում է մնալ Երևանի համալսարանի հասարակական ֆակուլտետի մանկավարժական բաժանմունքը, որտեղ 1925թ. սկսված ուս. տարուց սովորում

էին մանկավարժական ինստիտուտից փոխադրված և նոր ընդունված ուսանողներ, թվով ընդամենը 51 հոգի³:

Բացի գյուղատնտեսության մեջ աշխատող մասնագետներից, ծրագրվում է նաև մասնագետներ նախապատրաստել արդյունաբերության ոլորտում աշխատելու համար, որով պետք է պայմանավորել ինդուստրիալ տեխնիկումների բացումը:

Դրանցից առաջինը պետք է մատնանշել Երևանի ինդուստրիալ տեխնիկումը, որը բացվել է 1921թ. նոյեմբերի 7-ին, Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձի օրը: Այն ուներ երկու՝ շինարարական և էլեկտրա-մեխանիկական բաժիններ: Ուսումը, չորսամյա էր: Հետաքրքիր եզրակացությունների տեղիք է տալիս այն հանգամանքը, որ այս տեխնիկումը 1924 - 25 ուս. տարում ավարտում են շինարարական բաժնից՝ 14 հոգի, իսկ էլեկտրա-մեխանիկականից՝ 16⁴:

Շրջանավարտների այս քիչ քանակը (30 հոգի) պետք է պայմանավորել այն հանգամանքով, որ երկրում դեռևս չկային արդյունաբերական բավարար քանակությամբ ձեռնարկություններ, որոնք խթան կհանդիսանային տեխնիկումների ուսանողների թվաքանակի աճի համար: Իսկ քանի որ դրանք դեռ չկային կամ նոր էին կայանում, իսկ պետք է շահագրգռել պատանիներին կամ երիտասարդներին՝ այնտեղ սովորելու: Համաձայն ուսումնասիրվող շրջանում կազմված տեղեկագրի՝ 1925 - 26 ուս. տարում այստեղ արդեն սովորում էր 207 հոգի⁵, որը պետք է պայմանավորել որոշ արդյունաբերական հաստատությունների կայացած լինելու հանգամանքով: Հաջորդը 1922թ. սկզբին բացված Լենինականի ինդուստրիալ տեխնիկումն էր, որը նույնպես ուներ

1 Նույն տեղում:
2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:
4 Նույն տեղում:
5 Նույն տեղում:

երկու՝ գյուղատնտեսական և մեխանիկական բաժին:

Տեղեկագրից եզրակացվում է, որ առաջին երեք տարիներին ուսանողներ ունեցել է միայն մեքենայագիտական բաժինը, որովհետև այնտեղ կարդում ենք՝ «1924 թ. փետրվարին 4-րդ խմբակի մեքենայագիտական բաժինը ավարտում են 16 հոգի, իսկ 1925 թվին՝ 33 հոգի»¹:

1926թ. հունվարի դրությամբ այս տեխնիկումում սովորել են 84 հոգի՝ գյուղատնտեսության և 68 հոգի մեքենայագիտական բաժնում:

Բնականաբար սովորողների թիվը դարձյալ քիչ էր և դա, կարծում ենք, դարձյալ պետք է պայմանավորել հաստատությունների և գյուղատնտեսական տեխնիկայի սակավությամբ, ինչպես նաև՝ աշխատատեղիների ոչ բավարար առկայությամբ, որն, իհարկե, միանգամայն օրինաչափ էր նոր ձևավորվող տնտեսակարգի համար:

Տեխնիկական ոլորտում աշխատելու համար կադրերը նախապատրաստվում էին ոչ միայն ուսումնական հաստատություններում, այլև, այսպես կոչված տեխնիկական կուրսերում, որոնք հիմնականում կազմակերպվում էին երկու՝ էլեկտրատեխնիկական և շինարարական գծով: Այս կուրսերի նպատակն էր՝ «տեսական պատրաստությունն չունեցող բանվորներին տալ իրենց աշխատանքի ասպարեզում անհրաժեշտ մասնագիտական-տեսական գիտելիքներ: Բացի մասնագիտական առարկաներից՝ ավանդվում էին նաև հայոց լեզու, ֆիզիկա, թվաբանություն և երկրաչափություն: Կուրսերում ունկնդրում էին 70 հոգի՝ մեքենավարներ, վերահսկիչներ, հյուսներ, դերձակներ, կոշկակարներ և այլն»²:

Փաստորեն արդեն իրեն զգացնել էր տալիս խորհրդային կրթական համա-

կարգին հետագայում էլ ավելի բնորոշ այն առանձնահատկությունը, որ հասարակական աշխատավոր շերտը (բանվոր, գյուղացի, արհեստավոր) կամ **արտադրողական հիմնական ուժերի ներկայացուցիչները պետք է լինեն գրագետ:**

Անկախ այն հանգամանքից, թե ով ինչ աստիճանի էր սովորում հիշյալ առարկաները, հարկ է մատնանշել, որ դրականն այն էր, որ հիմնական մասնագիտություն ձեռք բերելու հետ մեկտեղ բանվոր, գյուղացի կամ արհեստավոր անձը տեղեկացվում էր այլ գիտություններից ևս, որոնք, որոշակիորեն նպաստելու էին նրանց աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

Սովորողների քանակը մեծ չէր, բայց հընթացա երկրի տնտեսության զարգացման՝ ավելանում էր:

Լուսժողկոմատը կարևոր քայլեր էր ձեռնարկում որբերին աշխատանքով ապահովելու առումով ևս:

Բավական է նշել, որ նրանցից շատերը ներգրավված էին տարբեր դասընթացներում: Օրինակ, Երևանում բացվում են հատուկ կուրսեր կամ դասընթացներ՝ տրակտոր վարել սովորեցնելու համար: Կուրսերում ընդգրկված 60 հոգուց կեսը որբեր էին³: Արդեն 1926թ. սկզբից նախատեսվում է բացել

– կառուցողական որակյալ բանվորների կուրսեր՝ 90 հոգու համար, 9-ամսյա տևողությամբ, 3 խմբով:

Էլեկտրո-մոնտյորների կուրսեր՝ 50 հոգու համար, 5 – ամսյա տևողությամբ:

Մետաղագործների կուրսեր՝ 9 – ամսյա տևողությամբ, որոնցում պետք է ընդգրկվեր «մի քանի տասնյակ հոգի» և այլն⁴:

Այլ մասնագիտությունների գծով դարձյալ կուրսեր էին նախատեսվում (հաշվապահական, մեքենագործների, օպերատորների և այլն):

1 Նույն տեղում:
2 Նույն տեղում, էջ 302:

3 Նույն տեղում:
4 Նույն տեղում:

Եվ վերջապես ավելացնենք, որ 1921թ. սկսած բացվել են նաև մի շարք այսպես կոչված դպրոց-արհեստանոցներ, որոնցից կարևոր ենք համարում առանձնացնել ձեռարվեստի, կոշկակարական, կարուձևի դպրոց-արհեստանոցները, որոնք հետագայում միանում են 1923թ. հունիսին Երևանում ստեղծված կենտրոնական դպրոց-արհեստանոցին: Այսպիսի դպրոցներ կային նաև գավառներում (Լենինականի կազմարարական, Ստեփանավանի պոլիտեխնիկական և այլն):

Անդրադառնալով այսպես կոչված բանֆակներին, որոնք Հայաստանում հիմնվում են 1923թ. -ից, նախ Երևանում (փետրվարին), ապա՝ Լենինականում (սեպտեմբերին) արձանագրենք, որ Երևանի բանֆակում 1925-26 - ուս. տարում սովորում էին 370 հոգի, իսկ Լենինականի՝ 365: Չորս տարի սովորելուց հետո շրջանավարտները կամ պետք է վերադառնային «իրենց արտադրությունները (որտեղից գործուղված էին - Ռ. Մ.) կամ պետական-հասարակական այլ ասպարեզներ՝ խորհրդային շինարարության պատասխանատու աշխատանքներ տանելու համար»²:

1921-25թթ. որոշակի տեղ է հատկացվում արտադրողական ուժերի տեխնիկային նախապատրաստման անհրաժեշտության վրա, որի գիտակցումը բերում է արհեստագործական կրթության համակարգի արարմանը: Այդ համակարգը ընդհանուր կրթական համակարգի բաղադրամաս էր ոչ միայն այն պատճառով, որ Լուսժողկոմատի ենթակայության տակ էր, այլ՝ նաև այն, որ շաղկապված էր կրթական այլ հաստատությունների հետ: Արհեստագործական կամ տեխնիկական կրթության օջախների թիվը աստիճանաբար ընդլայնվում էր, քանի որ ուղիղ համեմատական էր երկրի տնտեսական աճին, որն արդեն 1920 - ական թթ. կեսերին զգալի էր:

Բարձրագույն կրթություն: Հայաստանի I Հանրապետության տարիներին հիմնադրված պետական համալսարանի վերակազմավորման գործընթացի արդյունքում այն կոչվեց Հայաստանի ժողովրդական համալսարան:

Լուսաբանելով խորհրդահայ շրջանի հայկական բուհական առաջին հաստատության զարգացման ընթացքը 1920 - ական թթ. առաջին կեսերին, այդ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ Ալ. Մյասնիկյանի՝ խնդրո առակայի մասին մոտեցումներին: Այսպես, իր հոդվածներից մեկում նա հետևյալն է գրել. «Մեր կուլտուրայի կենտրոնն է կազմելու պետական համալսարանը Յերեւանում: Նրա համար միջոցներ չպետք է խնայել, ինչպես և գրագիտության տարածման համար: Սրանք համարժեք և կենսական մեծություններ են: Որովհետև համալսարանը այն **հնոցն է ու լաբարատորիան, որից կենսատու ճառագայթներ են ցրվում դեպի ծայրերը: Գիրն ու ընթերցանությունը տարածելու համար պետք են լուսավոր գլուխներ, որ կտա համալսարանը: Հողի մշակությունը պահանջում է դաշտագետներ, որոնց ստեղծելու և համալսարանը: Արդյունաբերությունն ու արհեստը չեն կարող բարգավաճել առանց ճարտարապետի, որին նույնպես պատրաստելու և համալսարանը: Ընդհանուր կուլտուրայի զարկերակը բանելու և շարունակ և անընդհատ, յեթե առողջ պահվի սիրտը: Համալսարանը այդ սիրտն է»³: (Ընդգծումը մերն է - Ռ. Մ.)**

Ալ. Մյասնիկյանի դատողություններից այս ընդարձակ մեջբերումը ցույց է տալիս, որ համալսարանը գլխավոր դպրոցն էր այն մասնագետների պատրաստության, որոնք պետք է զարգացման հիմքը դնեին սոցիալիստական

1 Նույն տեղում:
2 Նույն տեղում, էջ 303:

3 Ալ. Մյասնիկյան (Ալ. Մարտունի), Խորհրդային Հայաստանի ուղին, տե՛ս «Մարտակոչ», N 231, 1923:

հասարակարգի առանձին բնագավառների՝ գիտության, արդյունաբերության, գյուղատնտեսության և մշակույթի: Ուստի ամենևին պատահական չէ, որ 1921 - 22թթ. ակնատեսն ենք լինում համալսարանում նոր ֆակուլտետների բացման, որոնց մասնագիտական կողմնորոշումը լրիվ համընկնում է խորհրդային հասարակարգի ձևավորվող բաղադրամասերին, այսինքն՝ ֆակուլտետների բացումը պայմանավորված էր գիտության և ժողովրդական տնտեսության (և առաջին հերթին՝ տնտեսության) պահանջներով:

Մենք արդեն գրել ենք, որ Հայաստանի ժողովրդական համալսարանը վերակազմավորվելուց հետո ուներ երկու՝ բնագիտական և հասարակագիտական ֆակուլտետներ:

1921 - 22թթ. ընթացքում (1921թ. հոկտեմբերից սկսած) սկսվում է համալսարանի նոր վերակազմավորման գործընթացը, որի արդյունքում ձևավորվում են հետևյալ հինգ ֆակուլտետները՝ ա) գյուղատնտեսական, բ) տեխնիկական, գ) խորհրդային շինարարության, դ) պատմագրական. ե) մանկավարժական¹:

Մանկավարժական ֆակուլտետը 1922թ. երկրորդ կիսամյակից վերածվում է առանձին մանկավարժական ինստիտուտի՝ եռամսյա դասընթացով: Սակայն, 1924թ. հոկտեմբերին այն կրկին միանում է համալսարանին՝ դառնալով հասարակագիտական ֆակուլտետի մի բաժինը՝ ֆիզիկա-մաթեմատիկական, պատմագրական և կենսաբանական ենթաբաժիններով²:

1921թ. հոկտեմբերին համալսարանի ռեկտորի պարտականությունից ազատվում է Հակոբ Մանանդյանը: Նրան փոխարինած Դավիթ Զավրյանը փաստորեն չի իրականացնում իր պարտա-

կանությունների կատարումը և մինչև փետրվարը վերջինիս փոխարինում է Պ. Քալանթարյանը: 1922թ. փետրվարի 14-ին համալսարանի ռեկտոր է հաստատվում բակտերիոլոգ-բիոքիմիկոս Հակոբ Հովհաննիսյանը, որը պաշտոնավորում է մինչև 1930թ.-ը³:

Անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ համալսարանի վերակազմավորման գործընթացն անընդհատ շարունակվում է՝ կապված տնտեսության այլ բնագավառներում նոր ճյուղերի ձևավորման անհրաժեշտության հետ:

1922թ. մարտին որոշում է կայացվում բժշկական ֆակուլտետ ստեղծելու մասին, որն իրականանում է նույն թվականի աշնանը⁴:

1922 - 23 ուս տարվա սկզբին խորհրդային շինարարության ֆակուլտետը վերակազմվում է հասարակագիտական ֆակուլտետի: 1923 - 24 ուսումնական տարվա սկզբին (հոկտեմբերի 20-ին) Հայաստանի ժողովրդական համալսարանը անվանվում է ՀԽՍՀ պետական համալսարան, որն ուներ հետևյալ ֆակուլտետները՝ գյուղատնտեսական, բժշկական, պատմագրական, հասարակագիտական և տեխնոլոգիական⁵:

Արդեն նշեցինք, որ 1924թ. հասարակագիտական ֆակուլտետին է միանում մանկավարժական ինստիտուտը: Այս ֆակուլտետին է միանում նաև պատմագրական ֆակուլտետը՝ դառնալով նրա մեկ ճյուղը:

1925 -26 ուս. տարվա առաջին կիսամյակի դրությամբ համալսարանն ուներ հետևյալ ֆակուլտետները.

1. գյուղատնտեսական
2. տեխնիկական
3. բժշկական
4. հասարակագիտական, որն ուներ հետևյալ ճյուղերը՝ ա) պատմական-գ-

1 Տե՛ս ՀԱԱ, ֆ. Խորհրդային Հայաստան, ց. Հայաստան, գ. 1920 - 25թթ., էջ 304 - 305, նաև՝ նույն տեղում, ֆ. 122, ց. 1, գ. 634, թ. 104:

2 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», N 241, 1924, նաև՝ ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 634, թ. 104:

3 Տե՛ս Լ. Պ. Ղարիբջանյան, Երևանի պետական համալսարանը, էջ 46:

4 ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 634, թ. 104, նաև՝ Լ. Պ. Ղարիբջանյան, նշվ. աշխ., էջ 46 - 47:

5 ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 634, թ. 104:

րական, բ) իրավաբանական, գ) մանկավարժական, որն ուներ հետևյալ ենթաբաժինները՝ ա) ֆիզիկա-մաթեմատիկական, բ) բիոլոգիական, գ) պատմական-գրական¹:

Կարևոր ենք համարում մատնանշել, որ ֆակուլտետներին կից աստիճանաբար կազմավորվում էին դրանց կայացման նպաստող լաբորատորիաներ, կաբինետներ և այլ հիմնարկներ:

Այսպես, 1921 - 22 ուս.տարում գործում էին ֆիզիկայի լաբորատորիա, քիմիական փորձերի կաբինետ, որը 1922թ. վերածվեց քիմիական լաբորատորիայի, կենսաբանական և հանքաբանական կաբինետ, որը 1923թ. վերածվեց բնագիտական թանգարանի, անատոմիական, հյուսվածաբանական ու բնախոսական կաբինետներ:

1923 - 24 ուս. տարում բացվում է ախտաբանական կաբինետ, որը անատոմիական, հյուսվածքաբանական ու բնագիտական կաբինետներին միանալով, արդեն 1926թ.վերածվում է անատոմիական ինստիտուտի:

1924 - 25 ուս. տարվա ընթացքում բացվում է քիմիական քանակական անալիզների լաբորատորիա²:

1925 - 26 ուս. տարում համալսարանն ուներ 104 դասախոսներ, որոնցից 10-ը պրոֆեսորներ էին, իսկ բոլոր ֆակուլտետներում սովորող ուսանողների թիվը հասնում էր 1195-ի³:

Եթե հաշվի առնենք, որ 1922թ. համալսարանում սովորում էր ընդամենը 490 հոգի³, աճն ակնհայտ էր:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել նաև, որ համալսարանի դռները բաց էին հասարակության ցանկացած շերտի ներկայացուցիչների համար:

Ավելացնենք նաև, որ համալսարանը հրապարակում է հայերեն լեզվով աշխատություններ, որոնք գրված էին պրոֆեսորա-դասախոսական կազմի ներկայացուցիչների կողմից, կամ թարգմանաբար այլ լեզուներից:

Պետհրատի կողմից լույս ընծայված այդ աշխատություններն առնչվում էին տարբեր մասնագիտությունների⁴:

1921 - 23թթ. կարելի է համարել համալսարանի կազմավորման շրջան, որն ընթանում էր օբյեկտիվ դժվարություններով, որոնցից էին, դասախոսական կազմի ոչ բավարար քանակը, հայերեն լեզվի ոչ բավարար իմացությունը որոշ դասախոսների կողմից: Անհրաժեշտ կահավորման և շենքային միջոցների պակասը:

Համալսարանը լինելով ՀԽՍՀ առաջին բարձրագույն կրթօջախը, աստիճանաբար պետք է հիմք հանդիսանար բարձրագույն կրթության առավել լայն ծավալման համար՝ իրենից ձյուղավորելով այլ բարձրագույն հաստատություններ: Այդ գործընթացը տեղի ունեցավ հաջորդ տարիներին:

1 Նույն տեղում, նաև՝ ֆ. Խորհրդային Հայաստան, ց. Հայաստան, գ. 1920 - 1925թթ., էջ 305:

2 1.Նույն տեղում, ֆ. Խորհրդային Հայաստան, ց. Հայաստան, գ.1920-1925թթ., էջ 306:

3 Տես ՀԽՍՀ Ժողովրդական կոմիսարիատների հաշվետվությունը, 1920 -1922, էջ 134:

4 Տե՛ս Հ. Նավակատիլյան, Դետերմինատներ, Յերեվան, 1922, նույնի՝ Հանրահաշիվ, մի քանի գլուխներ, Յերեվան, 1922, Հ. Մանանդյան, Հայաստանի պատմությունը թուրք թաթարական արշավանքների շրջանում, Յերեվան, 1922, Վ. Արծրունի, Մարդակազմություն (Անատոմիա), պարկ I, Վոսկյաբանություն (Անատոլոգիա), պրակ 2, Հողաբանություն (Մինդեոմոլոգիա), Յերեվան, 1922, Ա. տերտերյան, Հայոց նոր գրականություն, պրակ Ա, համառոտ դարընթաց, Յերեվան, 1922, Մ. Աբեղյան, Համառոտություն հայ ժողովրդական վեպի և հին գրական պատմության, Յերեվան, 1923 և այլն:

THE EDUCATION SYSTEM IN ARMENIA BETWEEN 1921 AND 1925

MIRZAKHANYAN RUBEN

*Rector of the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan,
Doctor of Historical Sciences, Professor*

In the period between 1921 and 1925 on its way, full of obstacles caused by poor economic situation and absence of specific school-related traditions in the reality of Soviet Armenia, the education and overall enlightenment realm of Armenia experienced a noticeable upsurge.

Back then, the education and enlightenment sphere emerged in the following successive stages: elimination of illiteracy, organization of preschool education, and the formation of Soviet Armenian school system.

All the efforts relevant to this domain were aimed at the formation of soviet school system that was meant to undergo pertinent changes of ultimate issues defined on the agenda of school system organization.

ОБРАЗОВАТЕЛЬНАЯ СИСТЕМА АРМЕНИИ 1921-1925 гг.

МИРЗАХАНИЯН РУБЕН

Доктор исторических наук, профессор, ректор Армянского государственного педагогического университета им. Хачатуря Абовяна

Вопреки имеющим место серьезным препятствиям на пути формирования образовательной школы в Советской Армении, которые были обусловлены неутешительным состоянием экономики и отсутствием школьных традиций на территории республики, армянская советская образовательно-просветительская система переживала подъем.

Образовательно-просветительская система имела следующие этапы развития: ликвидация безграмотности, организация дошкольного образования, становление советской школы.

Организация образовательной системы приводит к формированию качественно новой школы.